

Հայցվորի անունը  
Հայցվորի հասցեն Քաղաքը,  
CA փոստային ինդեքսը

**ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՊԱՀԱՆՁԻ ՄԱՍԻՆ**

Հիմա, երբ ներկայացրել եք գործազրկության ապահովագրության (Unemployment Insurance, UI) հայց, Զբաղվածության զարգացման վարչությունը (Employment Development Department, EDD) պահանջում է, որ գրանցվեք աշխատանքի համար՝ օգտվելով CalJOBS<sup>SM</sup>-ից՝ Կալիֆոռնիա նահանգի աշխատանքի բորսայի առցանց համակարգից:

Ձեզ տրվում է **21 օր՝ այս ծանուցագրի ամսաթվից հաշված**, որպեսզի մուտք գործեք CalJOBS և լրացնեք Ձեր գրանցման տվյալներն ու ավելացնեք ինքնակենսագրական: Եթե անցյալում օգտվել եք CalJOBS-ից, անհրաժեշտ կլինի թարմացնել գրանցման տվյալներն ու ավելացնել ամենաթարմ աշխատանքային կենսագրությունը:

Եթե նախկինում չեք օգտվել CalJOBS-ից, EDD-ն նախագրանցման հարցաթերթ է կազմել Ձեզ համար: Գործընթացն իրականացնելու համար մուտք գործեք [www.caljobs.ca.gov](http://www.caljobs.ca.gov) կայքը: Ձեր օգտանունը Ձեր լրիվ ազգանունն է, անվան սկզբնատառը և սոցիալական ապահովության քարտի համարի (SSN) վերջին չորս թվանշանները: Ձեր գաղտնաբառը կազմված է Ձեր ծննդյան օրվա երկու նիշից, ամսվա երկու նիշից և SSN-ի վերջին չորս թվանշաններից:

**ՕՐԻՆԱԿ՝** Jane Smith անունով մեկի համար, ով ծնվել է հուլիսի 4-ին, և SSN-ի վերջին չորս թվանշաններն են՝ 1234: Զնոռանաք CalJOBS մուտք գործելիս օգտագործել սեփական տվյալները:

Օգտանուն՝	Smithj1234
Գաղտնաբառ՝	04071234

Առաջին անգամ մուտք գործելու ժամանակ կստանաք ժամանակավոր գաղտնաբառը փոխելու մասին հուշում: Եթե չեք կարող մուտք գործել կամ օգնության կարիք ունեք, խնդրում ենք դիմել America's Job Center of California<sup>SM</sup> (AJCC) կազմակերպության ստորև նշված տեղական գրասենյակ:

**CalJOBS<sup>SM</sup>-ում չգրանցվելը և ինքնակենսագրությունը չթարմացնելը կարող է ազդել UI նպաստներ ստանալու Ձեր իրավունակության վրա**

CalJOBS-ում կարելի է ստեղծել որակյալ ինքնակենսագրություն, որը կարող են դիտել գրանցված գործատուները: Կարող եք դիտել բազմաթիվ թափուր աշխատատեղեր Կալիֆոռնիայի ամբողջ տարածքում և դիմել դրանց համար: Կարող եք Job Seeker Services (Աշխատանք որոնողի ծառայություններ) բաժնում նախադրել "Virtual Recruiter" (Վիրտուալ հավաքագրող), որպեսզի էլեկտրոնային փոստով ինքնաբերաբար ծանուցումներ ստանաք Ձեր հմտություններին և նպատակներին համապատասխանող նոր թափուր աշխատատեղերի մասին:

Սկսելու համար կարող եք CalJOBS մուտք գործել առցանց՝ [www.caljobs.ca.gov](http://www.caljobs.ca.gov) **հասցեով, կամ այցելելով AJCC-ի տեղական գրասենյակ:** Եթե չունեք ինտերնետի հասանելիություն կամ CalJOBS մուտք գործելու հարցում աջակցության կարիք ունեք, այցելեք աշխատանքի տեղավորման մոտակա կենտրոն, որտեղ կարող եք համակարգիչ օգտագործել աշխատանքի առցանց որոնման համար և ցանկացած քայլում դիմել անձնակազմի օգնությանը:

AJCC-ի տեղական գրասենյակի հասցեն և հեռախոսահամարն է՝

**Ձե ր տեղ ակ ան America's Job Center of California  
0000 Main St.  
City, CA ZIP Code  
000-00-0000**

EDD-ն, որը հավասար հնարավորություններ տրամադրող գործատու և ծրագիր է, հանդիսանում է այս հրատարակության գործընկերը: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն վերը նշված հեռախոսահամարով (ձայնային) կամ TTY 1-800-815-9387 զանգահարելու միջոցով: